ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՆՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-19/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան 06 հունիսի 2019թ.
Ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գալստյան
Հանձնաժողովի անդամներ Ս. Սիմոնյան
Ռ.Աբգարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ք.Հայրապետյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Ռ.Գալստյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների գնահատման մասին
3. Մերժված հայտի մասին:
4. Պայմանագիր կնքելու որոշման մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝0

2.ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններիգնահատման մասին
(Ռ.Գալստյան)

Ընդունել ի գիտություն, որ 05.06.2019թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ Անդրանիկ Գասպարյան ԱՁ-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 7000 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

«ՆՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-19/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
Ընտրված մասնակից ճանաչել՝		
1	Արֆարմացիա ՓԲԸ	6,15,22

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0

ProTender©
www.protender.am

3.Մերժված հայտի մասին
(Ռ.Գալստյան)

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Անդրանիկ Գասպարյան Ա Ձ -ի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5.Պայմանագիր կնքելու որոշման մասին
(Ռ.Գալստյան)

Բացառությամբ՝ 1-4,7,9,10,11,14,16,17,18,19,21,23,24,29,30,31,32,33,37,38,39,40,42-48,51-53,56,57,60-65 չափաբաժինների՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Ռ.Գալստյան)

«ՆՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-19/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ք.Երևան, Նուբարաշեն Չնքուշի 4 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գալստյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Սիմոնյան

Ռ.Աբգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ք.Հայրապետյան

ProTender©
www.protender.am